

Թիւ 27051
Հոկտեմբեր 23, 1980

Արժանաշնորհ
Տ. Յակոբ Բհնյ. Կէօքժեան
Հովիւ Կալկաթայի Հայոց
Կալկաթա.

Սիրելի Տէր Յակոբ,

Վերջերս Տ. Բարթող Մահանան Նիւ Եորք այցելեց եւ մեզի հետ
ուսնեցած հանդիպումին ընթացքին յիշեց նաեւ ձեր դրկած սկիհի
մասին:

Մենք ժամանակին ստացած ենք սկիհը եւ ատենին յայտնած էինք
մեր շնորհակալութիւնը: Այնպէս կ'երեւի որ մեր գիրը չէր ստա-
ցած:

Անգամ մը եւս կը փափարինք մեր խորին շնորհակալութիւնը յայտ-
նել ձեզի՝ ձեր դրկած սկիհին համար, որ աչքառու է իր ունեցած
չափէ դուրս բարձրութեան եւ հասակին պատճառաւ:

Կ'աղօթենք որ Տէրը ձեզի ու ձեր հարազատներուն պարգեւէ բա-
ջառողջութիւն եւ եկեղեցանուէր ձեր բարի գործերուն յաջողու-
թիւն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԸՆՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ